01/10.1/16818-10
2010-12-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ստյոպա Սաֆարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. 1-ին հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ «ժառանգությունե բառը ժառանգման իմաստով, բացի օրենսգրքի 1185-րդ հոդվածից, գործածվում է նաև օրենսգրքի այլ հոդվածներում։ Ուստի, նախագծի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխության հետ կապված՝ անհրաժեշտություն է առաջանում փոփոխություն կատարել նաև օրենսգրքի այլ հոդվածներում, հակառակ դեպքում կխաթարվի օրենսգրքի տերմինաբանությունը, և հոդվածների միջև կառաջանան անհամապատասխանություններ։ Բացի դրանից, «ժառանգությունե բառը ժառանգման իմաստով կիրառվում է այդ հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերում, ուստի, օրենսգրքի 1185-րդ հոդվածի փոփոխության արդյունքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև այլ իրավական ակտերում, քանի որ օրենսգրքի և այլ իրավական ակտերի միջև կարող են հակասություններ առաջանալ։

2. 2-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ, ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, կտակ կազմելու իրավունք ունի ոչ միայն լրիվ գործունակ, այլև սահմանափակ գործունակ քաղաքացին, եթե դատարանի կողմից այդ մասով նրա գործունակությունը չի սահմանափակվել:

3. 3-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ օրենսգրքի 1193-րդ հոդվածի 1-ին մասով «ցանկացած գույքե հասկացությունը գործածվել է ոչ թե գույքի պատկանելության, այլ գույքի տեսակի իմաստով:

Բացի դրանից, անձը կարող է կտակել նաև տվյալ պահին իրեն չպատկանող գույք, քանի որ որպես ժառանգություն տրվում է ոչ թե կտակի կազմման պահին ժառանգատուին պատկանող, այլ ժառանգության բացման պահին ժառանգատուին պատկանող գույքը:

4. 5-րդ հոդվածով առաջարկվող 1198-րդ հոդվածի նոր խմբագրության կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ «ենթանշանակված ժառանգե հասկացություն նախատեսված չէ:

Բացի դրանից, մեր կարծիքով, նպատակահարմար է օրենսգրքում գործածել «ենթաժառանգե և ոչ թե «ենթանշանակված ժառանգե եզրույթը, քանի որ 1964 թվականին ընդունված և 1999 թվականին ուժը կորցրած Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի շատ եզրույթներ ներկայումս չեն գործածվում, ուստի, «ենթաժառանգե բառը «ենթանշանակված ժառանգե բառերով փոխարինելը գտնում ենք ոչ նպատակահարմար:

Միաժամանակ հայտնում ենք, որ «ենթաժառանգե բառը գործածվում է նաև օրենսգրքի այլ հոդվածներում, մինչդեռ նախագծով փոփոխություն է նախատեսված միայն օրենսգրքի 1198-րդ հոդվածում:

Հարկ է նշել նաև, որ նույն հոդվածում առկա է հասկացությունների կրկնություն, մասնավորապես, «չընդունի ժառանգությունը և «հրաժարվի ժառանգությունից հասկացություններն ըստ էության նույն իմաստն են արտահայտում, և այդ առումով հոդվածի 1-ին մասը խմբագրման կարիք ունի:

5. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 39-րդ հոդվածի 3-րդ մասի և 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ 1-ին հոդվածում անհրաժեշտ է նշել օրենսգրքի լրիվ անվանումը.

2) 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝

ա. 1-ին հոդվածը «շարադրելե բառից հետո անհրաժեշտ է լրացնել «նոր խմբագրությամբե բառերով,

բ. 2-րդ հոդվածում «ձևովե բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբե բառով,

գ. 3-րդ հոդվածում «արտահայտությամբե բառն անհրաժեշտ է փոխարինել «բառերովե բառով,

դ. 5-րդ հոդվածում «բովանդակությամբե բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբե բառով.

3) պահանջները՝ 1-ին հոդվածում «բովանդակության մեջե բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին և 2-րդ մասերումե բառերով։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-1037-26.11.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

AJV-50-03 2010-12-23

Հոդված 1. Օրենսգրքի 1185-րդ հոդվածի վերնագիրը շարադրել «ժառանգման հիմքերը», իսկ հոդվածի բովանդակության մեջ «ժառանգությունը» բառը փոխարինել «ժառանգումը» բառով։

Հոդված 2. 1192-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետեւյալ ձեւով. «Կտակ կարող է կազմել լրիվ գործունակությամբ օժտված քաղաքացին»։

Հոդված 3. 1193-րդ հոդվածի 1-ին մասում «ցանկացած գույքը» բառերը փոխարինել «իրեն պատկանող ցանկացած գույքը» արտահայտությամբ։

Հոդված 4. 1195-րդ հոդվածի 1-ին մասում «ժառանգելը» բառը փոխարինել «կտակելը» բառով։

Հոդված 5. 1198-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 1198. Ժառանգներ ենթանշանակելը*

1. Կտակարարն իրավունք ունի կտակում մատնանշելու այլ ժառանգի (ենթանշանակված ժառանգի) այն դեպքի համար, երբ նրա նշանակած ժառանգը մահանա մինչեւ ժառանգությունը բացվելը, չընդունի ժառանգությունը կամ հրաժարվի ժառանգությունից, կամ որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից, կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները։

2. Ենթանշանակված ժառանգ կարող է լինել ցանկացած անձ, ով կարող է լինել ժառանգ սույն օրենսգրքի 1190-րդ հոդվածին համապատասխան։

3. Ըստ կտակի ժառանգի կողմից ժառանգությունից հրաժարվելը ոչ ենթանշանակված ժառանգի օգտին չի թույլատրվում։

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հիմնավորում

Նախագծով առաջարկվող փոփոխություններն առաջին հերթին միտված են շտկելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ ժառանգման ինստիտուտին վերաբերող նորմերում առկա լեզվական անճշտությունները։ Մասնավորապես, «ժառանգությունե» նշանակում է ժառանգական զանգված, համապատասխան գույքային զանգվածը, իսկ «ժառանգումը» արդեն գործընթացն է։

Օրենսգրքի 1192-րդ հոդվածի համաձայն՝ կտակ կարող է անել գործունակ քաղաքացին։ Քանի որ գոյություն ունի գործունակության երկու տեսակ՝ սահմանափակ գործունակություն եւ լրիվ գործունակություն, հոդվածի շարադրանքից պարզ չէ, թե որն է նկատի առնվում։ Հաշվի առնելով, որ կտակ կազմելով անձը առաջացնում, փոփոխում եւ դադարեցնում է իրավունքներ եւ պարտականություններ, իսկ վերջինները լրիվ ծավալով իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ լրիվ գործունակություն, նախագծով առաջարկվում է հստակեցնել այդ հասկացությունը։

1193-րդ հոդվածում գործածված «ցանկացած գույքե արտահայտությունը չի կարող կիրառելի լինել, քանի որ անձը կարող է կտակել միայն իրեն պատկանող գույքը։

«Ժառանգելե բառը նշանակում է մեկից «ժառանգություն ստանալե, իսկ որեւէ մեկին «ժառանգություն թողնելը կոչվում է «կտակելե. այս հիմնավորումներով են պայմանավորված 1195-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները։

Իրավաբանական գրականության մեջ չկա ենթաժառանգ հասկացություն. խոսքը կարող է լինել միայն ենթանշանակված ժառանգի մասին։ Նման ձեւով է շարադրված նաեւ ՀՍՍՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածը։

Ինչ վերաբերում է 1198-րդ հոդվածի 3-րդ մասին, ապա քանի որ հոդվածը վերաբերում է ենթանշանակված ժառանգի ինստիտուտին, այստեղ պետք է նկատի առնվի ժառանգությունից հրաժարվելը՝ ի վնաս ենթաժառանգի։ Այս նկատառումներով առաջարկվում է վերաձեւակերպել հոդվածը։

Քաղաքացիական իրավունքի այնպիսի կարեւոր ինստիտուտ, ինչպիսին ժառանգման ինստիտուտն է, առաջարկվող փոփոխություններով իրավաբանորեն եւ լեզվական առումով ավելի հստակ կդառնա։